Հաստատվում եմ՝
Հյուսիսային համալսարանի
ռեկտոր Ռ. Սրակիչյան
«21» մարտի 2016թ.

Հաստատված է
Հյուսիսային համալսարանի
գիտական խորհրդի
2016թ. ապրիլի 14-ի որոշմամբ
(արձ. No 16)

Կանոնակարգ
Հյուսիսային համալսարանում հետբուհական մասնագիտական կրթության կազմակերպման

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Հյուսիսային համալսարանում (այսուհետև՝ համալսարան) հետբուհական մասնագիտական կրթությունը կազմակերպվում է «Հայաստանի Հանրապետությունում ասպիրանտուրայի ընդունելության և ուսուցման, դոկտորանտուրայի և հայցորդության ձևակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հուլիսի 20-ի No 662 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի փետրվարի 25-ի No 238-Ն որոշմամբ սահմանված կարգով:

1.2. Սույն «Կանոնակարգը» ելնում է նաև նրանից, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության կառավարությունը վերը նշված՝ 2016 թվականի փետրվարի 25-ի No 238-Ն որոշմամբ ուժը կորցրած ճանաչելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հուլիսի 20-ի «Հայաստանի Հանրապետությունում ասպիրանտուրայում և դոկտորանտուրայում ուսուցման կարգը հաստատելու մասին» No 662 որոշումը՝ միաժամանակ բացառության կարգով ուժի մեջ է թողել այդ որոշմամբ հաստատված Կարգի 6-րդ և 7-րդ կետերը, այն է՝

«6. Ասպիրանտուրայի, դոկտորանտուրայի և հայցորդների համակարգի ձևերով գիտական կադրեր պատրաստելու իրավունք ունեն այն բուհերն ու կազմակերպությունները, որոնք ունեն բարձր որակավորման գիտամանկավարժական և գիտական կադրեր, ժամանակակից գիտահետազոտական ու փորձարարական բազա, հեղինակավոր գիտական դպրոցներ, մասնակցում են հանրապետական և միջազգային գիտակրթական ծրագրերի, նախագծերի մշակմանն ու իրականացմանը:

7. Ասպիրանտուրայի, դոկտորանտուրայի ձևերով գիտական կադրեր պատրաստելու կամ այն դադարեցնելու վերաբերյալ առաջարկությունները համապատասխան նախարարությունների և գերատեսչությունների կողմից ներկայացվում են ՀՀ կրթության և գիտության նախարարություն (այսուհետ՝ նախարարություն), իսկ ՀՀ ԳԱԱ կազմակերպություններնեի կողմից՝ ՀՀ ԳԱԱ նախագահություն՝ կցելով սույն կարգի 2-րդ կետում նշված մասնագիտությունների ցանկը, յուրաքանչյուր մասնագիտությամբ՝ գիտամանակավարժական կադրերի և գիտական աշխատողների կազմը, նրանց գիտական աշխատությունների ցանկը, ինչպես նաև բուհի և կազմակերպության գիտական (գիտատեխնիկական) խորհրդի որոշումը:

Ասպիրանտուրայի և դոկտորանտուրայի ձևերով գիտական կադրեր պատրաստելու և այն դադարեցնելու մասին որոշում ընդունվում է փորձաքննության հիման վրա, որը սույն կարգի 6-րդ կետում նշված՝ նախարարության կողմից սահմանված չափանիշներով անցկացվում է նախարարության, իսկ ՀՀ ԳԱԱ-ի համակարգում՝ ՀՀ ԳԱԱ նախագահության կողմից: Ասպիրանտուրայի և դոկտորանտուրայի բացումը և դրանց գործունեության դադարեցումը ձևակերպվում է ՀՀ կրթության և գիտության նախարարի, իսկ ՀՀ ԳԱԱ համակարգում՝ ՀՀ ԳԱԱ նախագահի հրամանով:

Բուհերում, կազմակերպություններում ասպիրանտուրայի և դոկտորանտուրայի գիտամեթոդական ղեկավարությունն ու գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է նախարարությունը»:

բ) Հայաստանի Հանրապետության կառավարության վերը նշված՝ 2016 թվականի փետրվարի 25-ի No 238-Ն որոշման համաձայն նրա դրույթներն ուժի մեջ են մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, և դրանց գործողությունը տարածվում է այդ ժամկետից հետո ընդունվածների և ձևակերպվածների վրա:

Համալսարանի հետբուհական մասնագիտական կրթության համակարգում մինչ այդ ժամկետն ընդունվածների կրթությունը շարունակվում է իրականացվել համալսարանի գիտական խորհրդի 2013 թվականի հոկտեմբերի 6-ի որոշմամբ հաստատված և համալսարանի ռեկտորի կողմից նույն թվականի նոյեմբերի 8-ին վավերացված «Հյուսիսային համալսարանի ասպիրանտուրայի ընդունելության կարգ» - ով:

1.3. Համալսարանը յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբից առնվազն 6 ամիս առաջ համապատասխան հայտ է ներկայացնում նախարարություն՝ սահմանված կարգով նախարարության կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանը ներկայացվող առաջիկա ուսումնական տարվա ասպիրանտուրայի և դոկտորանտուրայի ընդունելության տեղերի և առկա ուսուցմամբ ասպիրանտուրայի ընդունելության տեղերի բաշխման մեջ ներառելու համար:

II. ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆԸ

2.1. Մրցութային կարգով համալսարանի ասպիրանտուրա են ընդունվում մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի կրթական աստիճան ունեցողները:

2.2. Ասպիրանտուրա ընդունվելու համար անձի կամ նրա լիազորած անձի կողմից դիմումը տրվում է համալսարանի ռեկտորի անունով՝ կցելով հետևյալ փաստաթղթերը՝

ա) բակալավրի և մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի դիպլոմի ու դրանց հավելվածների պատճենները (օտարերկրյա պետություններում բարձրագույն կրթություն ստացածների համար՝ փաստաթուղթ նրանց կրթության համարժեքության մասին),

բ) օտար լեզու և ինֆորմատիկա և տեղեկատվահաղորդակցության հիմունքներ

առարկաների ատեստավորման վկայականը կամ դրան համապատասխան տեղեկանքը (սահմանված ներքին շեմով՝ բալային գնահատմամբ),

գ) ընտրված մասնագիտությամբ հրատարակված առնվազն մեկ գիտական աշխատանքի պատճենը կամ գիտական ռեֆերատ՝ առնվազն 20 տպագրական էջի սահմաններում,

դ) ինքնակենսագրություն և երեք լուսանկար (3x4 չափսի),

ե) քաղվածք աշխատանքային գրքույկից (առկայության դեպքում):

2.3. Ասպիրանտուրայի ընդունելությունը՝ առկա ուսուցմամբ և պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (այսուհետ՝ անվճար) պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման իրավունքով տեղերի համար, իրականացվում է համապատասխան տարվա ժամանակահատվածի զորակոչը կազմակերպելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ նախատեսված ժամկետներում:

2.4. Պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման իրավունքով (այսուհետ՝ վճարովի) տեղերի համար ասպիրանտուրայի ընդունելությունն իրականացվում է համալսարանի ռեկտորատի կողմից սահմանվող ժամանակահատվածում:

2.5. Ասպիրանտուրայի ընդունելության կազմակերպման համար համալսարանի ռեկտորատի հրամանով ստեղծվում է ընդունող հանձնաժողով՝ ռեկտորի կամ պրոռեկտորի նախագահությամբ:

2.6. Ասպիրանտուրայի ընդունելության մասնագիտական քննության անցկացման համար համալսարանի ռեկտորի հրամանով ստեղծվում են մասնագիտական քննական հանձնաժողովներ (այսուհետ՝ հանձնաժողով):

2.7. Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են տվյալ մասնագիտական բնագավառի գիտական աստիճան կամ գիտական կոչում ունեցող երեք մասնագետ:

2.8. Ասպիրանտուրայի ընդունելության մասնագիտական քննության անցկացման ժամանակացույցը հաստատում է համալսարանի ռեկտորը և տեղեկացնում է նախարարությանը:

2.9. Համալսարանի հայտարարությունների համար նախատեսված վայրում փակցվում և (կամ) պաշտոնական կայքէջում տեղադրվում է մասնագիտական քննության՝

ա) անցկացման օրվա, տեղի և ժամի վերաբերյալ տեղեկատվությունը՝ քննությունն սկսելուց յոթ աշխատանքային օր առաջ,

բ) հարցաշարը՝ մասնագիտական քննությունից առնվազն մեկ ամիս առաջ,

գ) ընթացակարգային պահանջները, որոնք հաստատվում են համալսարանի ռեկտորի կողմից:

2.10. Դիմորդին մասնագիտական քննությանը մասնակցելու թույլտվությունը տալիս է համալսարանի ընդունող հանձնաժողովը՝ օտար լեզվից և ինֆորմատիկա և տեղեկատվահաղորդակցության հիմունքներից ստացած համապատասխան միավո-

ը հավաստող վկայականի և (կամ) տեղեկանքի առկայության դեպքում, ինչպես նաև ընդունելության մասնագիտությանը համապատասխան գիտական ռեֆերատի մասին մասնագիտական ամբիոնի գրավոր դրական գրախոսականի կամ գրախոսվող գիտական ամսագրերում հրատարակված գիտական աշխատանքների մասին հաստատված ցուցակի դեպքում:

2.11. Ստորև նշված օտար լեզուներից որևէ մեկից ստացած անհրաժեշտ նվազագույն միավոր է համարվում՝

ա) անգլերենից՝ «TOEFL» (iBT) (այԲիԹի)՝ 46 և «IELTS» (ԱՅԼԹՍ)՝ 5.5 միավորը,

բ) ֆրանսերենից՝ «TCF» (ԹիՍիԷֆ)՝ 200 միավորը,

գ) գերմաներենից՝ «on DaF» (օն ԴաՖ)՝ 60 միավորը:

2.12. Ինֆորմատիկա և տեղեկատվահաղորդակցության հիմունքներից ստացած անհրաժեշտ նվազագույն միավոր է համարվում 25 միավորը:

2.13. Մասնագիտական քննության հարցաշարը, որն ընդգրկում է նախորդ աստիճանների ծրագրային նյութը, կազմվում է համալսարանի մասնագիտական ամբիոնի կամ մասնագիտական քննական հանձնաժողովի կողմից և հաստատվում է ռեկտորի կողմից:

2.14. Մասնագիտական քննությունից երկու աշխատանքային օր առաջ՝ հրապարակված հարցաշարից կազմվում են հարցատոմսեր (առաջադրանքներ), որոնք հաստատվում են հանձնաժողովի նախագահի ստորագրությամբ և համալսարանի կնիքով: Հարցատոմսերը յուրաքանչյուր տարի վերանայվում են:

2.15. Ելնելով տվյալ մասնագիտության առանձնահատկությունից՝ մասնագիտական քննության անցկացման ձևը (գրավոր կամ բանավոր) սահմանում է ընդունող հանձնաժողովը:

2.16. Բանավոր քննությունը ձայնագրվում է, և արդյունքները պահպանվում են հրապարակվելուց հետո առնվազն 24 ժամ:

2.17. Մասնագիտական քննության արդյունքները գնահատվում են 20 (քսան) միավորանոց սանդղակով: Քննությունը համարվում է հանձնված, եթե դիմորդը ստացել է առնվազն տասներեք միավոր:

2.18. Գիտելիքների գնահատման մասին որոշումը կայացնելիս որպես հիմք է ընդունվում հանձնաժողովի յուրաքանչյուր անդամի կողմից նշանակված գնահատականների միջին թվաբանականը:

2.19. Դիմորդը քննության է ներկայանում անձը հաստատող փաստաթղթով:

2.20. Մասնագիտական քննության բողոքարկման ընթացակարգային պահանջներն են՝

ա) դիմորդը կարող է մասնագիտական քննության գնահատականը բողոքարկել հանձնաժողովին՝ արդյունքները հրապարակվելուց հետո մեկ ժամվա ընթացքում, հանձնաժողովի նախագահին ներկայացնելով գրավոր բողոքը, որը քննարկվում է նույն օրը,

բ) բողոքարկմանը մասնակցում են համալսարանի վարչական անձնակազմի

(դեկան կամ ուսումնամեթոդական ստորաբաժանման ներկայացուցիչ)՝ տվյալ հանձնաժողովի անդամ չհանդիսացող աշխատողը և համալսարանի ուսխորհրդի կամ ուսանողական գիտական ընկերության ներկայացուցիչը, որոնց թեկնածությունները նախապես հաստատվում են համալսարանի ռեկտորի կողմից,

գ) դիմորդի ներկայությամբ ուսումնասիրվում և քննարկվում է գրավոր աշխատանքը, իսկ բանավոր քննության դեպքում լսվում է ձայնագրությունը: Բողոքարկման արդյունքում բաց քվեարկությամբ, հանձնաժողովի անդամների և ներգրավված անձանց ձայների պարզ մեծամասնությամբ, կայացվում է որոշում՝

1. գնահատականը թողնել անփոփոխ,

2. գնահատականը բարձրացնել.

դ) ընդունված որոշման վերաբերյալ կազմվում է արձանագրություն, որն ստորագրվում է հանձնաժողովի նախագահի, համալսարանի վարչական անձնակազմի, ուսանողական խորհրդի կամ ուսանողական գիտական ընկերության ներկայացուցչի և դիմորդի կողմից: Նշված անձանցից որեէ մեկի՝ ընդունված որոշմանն անհամաձայնության դեպքում վերջինս գրավոր ներկայցնում է հատուկ կարծիք, որը կցվում է արձանագրությանը,

ե) գնահատականի փոփոխման դեպքում կազմվում է համապատասխան արձանագրություն,

զ) մասնագիտական քննության գնահատականը կարող է բողոքարկվել դատարանում՝ օրենքով սահմանված կարգով:

2.21. Մասնագիտական քննության վերահանձնում չի թույլատրվում:

2.22. Ասպիրանտուրայի մասնագիտական քննության արդյունքն ուժի մեջ է միայն տվյալ ուսումնական տարվա և միայն համալսարանի ընդունելության քննության ընթացքում:

2.23. Ասպիրանտուրա ընդունվում է մասնագիտական քննությունից առավելագույն միավոր ստացած անձը:

2.24. Մասնագիտական քննությունից ստացած հավասար գնահատականների դեպքում հաշվի են առնվում հետևյալ ցուցանիշները՝ ըստ հերթականության՝

ա) մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի ընդհանուր միջին որակական գնահատականը,

բ) բակալավրի և մագիստրոսի ընդհանուր միջին որակական գնահատականի գումարը,

գ) հրատարակված գիտական աշխատանքների թիվը,

դ) միջազգային կամ հանրապետական ուսանողական առարկայական մրցույթներում կամ օլիմպիադաներում ստացած դիպլոմները կամ միջազգային գիտաժողովներին մասնակցությունը (զեկուցումները):

2.25. Ընդունող հանձնաժողովը մրցույթի արդյունքների հիման վրա կայացնում է որոշում յուրաքանչյուր դիմորդի վերաբերյալ:

2.26. Ասպիրանտուրա ընդունվելու կամ մրցույթով չանցնելու վերաբերյալ

որոշման մասին դիմորդներն իրազեկվում են մասնագիտական քննությունից հետո յոթ աշխատանքային օրվա ընթացքում:

2.27. Ասպիրանտների հրամանագրումը կատարվում է համալսարանի ռեկտորի հրամանով՝ ասպիրանտի հետ կնքելով համապատասխան պայմանագիր:

2.28. Առկա ուսուցման ձևով և անվճար հիմունքներով ասպիրանտուրա ընդունվածներին տրվում է սահմանված չափի պետական կրթաթոշակ՝ ընդունման օրվանից:

III. ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱՅՈՒՄ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

3.1 Ասպիրանտուրայում ուսուցումն իրականացվում է առկա և հեռակա ձևերով, անվճար և վճարովի հիմունքներով: Առկա ձևով ուսուցման տևողությունը 3 տարի է, իսկ հեռակա ձևով ուսուցման տևողությունը՝ 4 տարի:

3.2 Ասպիրանտուրայում ուսուցման լրիվ բեռնվածությունը համարժեք է 180 կրեդիտային միավորի, որը բաղկացած է երկու փոխկապակցված մասերից՝ կրթական և հետազոտական:

3.3. Ասպիրանտն ուսման ընթացքում պետք է՝

ա) հանձնի ուսումնական ծրագրով (պլանով) նախատեսված քննությունը (քննությունները) և ստուգարքը (ստուգարքները) (այդ թվում՝ մասնագիտական քննությունը), կուտակի համապատասխան կրեդիտներ, ավարտի ատենախոսությունը և սահմանված կարգով անցկացնի ատենախոսության նախնական քննարկում,

բ) ունենա սահմանված կարգով հաստատված ատենախոսության ռեմա և գիտական ղեկավար, համալսարանի գիտական խորհրդի կողմից հաստատված աշխատանքային պլան և առնվազն 36 ժամ գիտամանկավարժական կամ հետազոտական ծանրաբեռնվածություն:

3.4. Ասպիրանտուրայում առկա ուսուցման ձևով ուսանելու ժամանակը համարվում է գիտամանկավարժական ստաժ:

3.5. Յուրաքանչյուր գիտական ղեկավար կարող է միաժամանակ ունենալ 5-ից ոչ ավելի ասպիրանտ և հայցորդ:

3.6. Ասպիրանտն ըստ աշխատանքային պլանի տարեկան մեկ անգամ ատեստավորվում է համալսարանի համապատասխան ամբիոնի կողմից: Համալսարանի տվյալ ամբիոնում, ֆակուլտետի (դեպարտամենտի) խորհրդում, գիտական հետազոտությունների, նորարարական ծրագրերի և հետբուհական մասնագիտական կրթության կենտրոնում, համալսարանի գիտական խորհրդում պարբերաբար լսվում և քննարկվում են ասպիրանտների ու նրանց գիտական ղեկավարների հաշվետվությունները ու հաղորդումները:

3.7. Սույն կանոնակարգի 3.6 կետով նախատեսված ատեստավորում չանցած ասպիրանտը համալսարանի ռեկտորի հրամանով ազատվում է ասպիրանտուրայից:

3.8. Գիտական հետազոտություններ կատարելիս՝ ասպիրանտն օգտվում է

համալսարանի գիտական սարքավորումներից, լաբորատորիաներից, համակարգչային տեխնիկայից, գրադարաններից և այլն:

3.9. Համալսարանից հեռացված ասպիրանտը կարող է վերականգնվել ասպիրանտուրայում՝ վճարովի հիմունքով ուսումը շարունակելու համար:

3.10. Ատենախոսությունը չպաշտպանած ասպիրանտին, իր ցանկությամբ, անվճար տրվում է համալսարանի կողմից սահմանված ակադեմիական տեղեկանք՝ ասպիրանտի կամ նրա լիազորած անձի կողմից դիմումը համալսարանի ռեկտորին ներկայացվելուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

3.11. Առկա ուսուցմամբ ասպիրանտին ուսման ընթացքում տարեկան տրվում է երկամսյա արձակուրդ՝ կրթաթոշակի պահպանմամբ:

3.12. Համալսարանի ռեկտորը կարող է արտաբյուջետային միջոցների հաշվին սահմանել կրթաթոշակի հավելավճար:

3.13 Ասպիրանտների գիտական ղեկավարների աշխատանքի վարձատրությունը կատարվում է համալսարանի կողմից՝ մեկ ասպիրանտի համար տարեկան 50 ժամ հաշվարկով:

3.14. Համալսարանի ռեկտորը կարող է արտաբյուջետային միջոցների հաշվին ասպիրանտի գիտական ղեկավարի աշխատավարձին հավելավճար սահմանել:

IV. ԴՈԿՏՈՐԱՆՏՈՒՐԱ

4.1. Դոկտորանտուրայի տևողությունը չի գերազանցում 3 տարին:

4.2. Դոկտորանտուրայում ձևակերպվում են այն անձինք, ովքեր ունեն գիտությունների թեկնածուի գիտական աստիճան և ներկայացնում են գիտական, տնտեսական կամ սոցիալ-մշակութային նշանակություն ունեցող հիմնարար և (կամ) կիրառական հետազոտությունների ծրագիր (նախագիծ):

4.3. Դոկտորանտուրայում ձևակերպվելու համար անձի կամ նրա լիազորած անձի կողմից դիմումը տրվում է համալսարանի ռեկտորի անունով՝ կցելով հետևյալ փաստաթղթերը՝

ա) գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի վկայագրի պատճենը (այլ երկրներում գիտական աստիճանի վկայագիր ստացածների համար՝ նաև Բարձրագույն որակավորման հանձնաժողովի կողմից տրված համապատասխանեցման հավաստագիրը),

բ) դոկտորական ատենախոսության պլանը,

գ) ինքնակենսագրություն և 3 լուսանկար (3 x 4 չափսի),

դ) հրատարակված գիտական աշխատությունների, գյուտերի և հայտնագործությունների, ինչպես նաև կատարված գիտահետազոտական աշխատանքների հաշվետվությունների ցանկը:

4.4. Սահմանված կարգով, համալսարանի ռեկտորի հրամանով դոկտորանտը ձևակերպվում է դոկտորանտուրայում, և նրա հետ կնքվում է պայմանագիր:

4.5. Դոկտորանտի ատենախոսության թեմայի և գիտական խորհրդատուի

հաստատումը կատարվում է սահմանված կարգով:

4.6. Դոկտորանտի համար սահմանված ժամկետում դոկտորանտը պետք է կատարի դոկտորական ատենախոսության պլանով նախատեսված աշխատանքները՝ ավարտի ատենախոսությունը և գործող կարգին համապատասխան անցկացնի ատենախոսության նախնական քննարկում:

4.7. Համալսարանի գիտական խորհուրդը, դոկտորանտի ծրագրին համապատասխան, տարեկան մեկ անգամ լսում է նրա հաշվետվությունը:

4.8. Գիտական հետազոտություններ կատարելիս՝ դոկտորանտն օգտվում է համալսարանի գիտական սարքավորումներից, լաբորատորիաներից, համակարգչային տեխնիկայից, գրադարաններից և այլն:

4.9. Դոկտորանտի գիտական խորհրդատուի աշխատանքի վարձատրությունը կատարվում է համալսարանի կողմից՝ սահմանված կարգով և չափով:

V. ՀԱՅՑՈՐԴՈՒԹՅՈՒՆ

5.1. Հայցորդը մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի կրթական աստիճան ունեցող անձ է:

5.2. Համալսարանում հայցորդությունն իրականացվում է վճարովի և անվճար հիմունքներով, համալսարանում սահմանած կարգով, որի տևողությունը չի գերազանցում 5 տարին:

5.3. Հայցորդ ձևակերպվելու համար անձի կամ նրա լիազորած անձի կողմից դիմումը տրվում է համալսարանի ռեկտորի անունով՝ կցելով հետևյալ փաստաթղթերը՝

ա) մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի դիպլոմի և դրա հավելվածի պատճենները (օտարերկրյա պետություններում բարձրագույն կրթություն ստացածների համար՝ փաստաթուղթ նրանց կրթության համարժեքության մասին),

բ) հրատարակված գիտական աշխատությունների ցուցակը կամ ընտրած մասնագիտությունից գիտական ռեֆերատ,

գ) ինքնակենսագրություն և երեք լուսանկար (3 x 4 չափսի),

դ) քաղվածք աշխատանքային գրքույկից (եթե դիմողն աշխատում է):

5.4. Համալսարանում սահմանված կարգի համաձայն հայցորդը ձևակերպվում է համալսարանի ռեկտորի հրամանով, և նրա հետ կնքվում է պայմանագիր:

5.5. Հայցորդի ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատումը կատարվում է սահմանված կարգով:

5.6. Հայցորդի լրիվ բեռնվածությունը համարժեք է 180 կրեդիտային միավորի, որը բաղկացած է երկու փոխկապակցված մասերից՝ կրթական և հետազոտական:

5.7. Հայցորդը պետք է հանձնի ուսումնական ծրագրով (պլանով) նախատեսված քննությունը (քննությունները) և ստուգարքը (ստուգարքները) (այդ թվում՝ մասնագիտական քննությունը), կուտակի համապատասխան կրեդիտներ, ավարտի ատենախոսությունը և սահմանված կարգով անցկացնի ատենախոսության նախնական

քննարկում:

5.8. Հայցորդը տարեկան մեկ անգամ, սահմանված կարգով, ատեստավորվում է համալսարանի համապատասխան ամբիոնի կողմից:

5.9. Գիտական հետազոտություններ կատարելիս հայցորդն օգտվում է համալսարանի գիտական սարքավորումներից, լաբորատորիաներից, համակարգչային տեխնիկայից, գրադարաններից և այլն:

5.10. Ատենախոսությունը չպաշտպանած հայցորդին, իր ցանկությամբ, անվճար տրվում է համալսարանի կողմից սահմանված ձևի ակադեմիական տեղեկանք՝ համալսարանի ռեկտորին հայցորդի կամ նրա լիազորած անձի կողմից դիմումը ներկայացվելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում:

5.11. Համալսարանի ռեկտորը կարող է սահմանված կարգով կատարել հայցորդի գիտական ղեկավարի վարձատրությունը (տարեկան առնվազն 30 ժամ):

VI. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

6.1. Սույն «Կանոնակարգում» շարադրված են համալսարանում հետբուհական մասնագիտական կրթության կազմակերպման ելակետային դրույթներն ու հիմնարար սկզբունքները, ինչպես նաև դրանց իրականացման հիմնական կանոնները:

6.2. Համալսարանի հետբուհական մասնագիտական կրթության համակարգի գործունեության ավելի հանգամանալի կանոնակարգումը կատարվում է հատուկ այդ նպատակին ուղղված լրացուցիչ ֆունկցիոնալ «Կարգ»-երի միջոցով, որոնք կազմվում են ըստ գործունեության առանձին ուղղությունների և կոնկրետ գործառույթների:

6.3. Նախորդ՝ 6.2. կետում հիշատակված «Կարգ»-երը մշակվում և համալսարանի գիտական խորհրդի հաստատմանն ու ռեկտորի վավերացմանն են ներկայացվում համալսարանի գիտական հետազոտությունների, նորարարական ծրագրերի և հետբուհական մասնագիտական կրթության կենտրոնի կողմից՝ համալսարանի դեպարտամենտների (ֆակուլտետների) խորհուրդների ու համապատասխան ամբիոնների ներգրավմամբ:

6.4. Սույն «Կանոնակարգը» ուժի մեջ է մտնում համալսարանի ռեկտորի կողմից հաստատվելուց հետո:

Հյուսիսային համալսարանի
գիտական հետազոտությունների,
նորարարական ծրագրերի և հետբուհական
մասնագիտական կրթության կենտրոն

Հ. Հասրաթյան

« 30 » մարտի 2016թ.